

Հ.Ս.ՂՈՐԴՈՒՄՆԵՐ

Մ. Մկրտչյան

## ՆԱԶԱՇ ՀՈՎՆԱԹԱՆԻ ՄԻ ԱՆՏԻՊ ՏԱՂԸ

Նաղաշ Հովնաթանի տաղերը գտնվում են Հայկական ՍՍՌ պետական ձեռագրատանը (Մատենադարան) և Մխիթարյան Միաբանության Վենետիկի ու Վիեննայի մատենադարաններում պահպանվող ձեռագրերում ու տաղարաններում, որոնք դրի են առնված տարրեր դարբերում: Նաղաշ Հովնաթանի տաղերը, ինչպես հայտնի է, առաջին անգամ հրատարակվել են 1910 թ. Փարիզում, այնուհետև 1932 թ. Երևանում: Վերջինը համարվում է Նաղաշ Հովնաթանի բանաստեղծությունների լիակատար ժողովածուն<sup>1</sup>:

Նաղաշ Հովնաթանի կյանքը մեծապես կապված է եղել Թիֆլիս քաղաքի հետ, որտեղ երկար ժամանակ ապրել ու ստեղծագործել է բանաստեղծը, ուստի պետք էր ենթադրել, որ Հովնաթանի վերաբերյալ այնտեղ նյութեր կարող էին լինել: Այս ուղղությամբ մեր պրպտումները տվեցին որոշ դրական արդյունքներ: «Վրաստանի թանգարան»-ի ձեռագրերի բաժնում պահպանվում են 214 հայկական ձեռագրեր՝ տաղարաններ, երգարաններ, մաշտոցներ, վարքագրություններ և այլն: Դրանցից № № 136, 146 և 305 ձեռագրերում կան Նաղաշ Հովնաթանի 5 տաղերը և նրա որդի՝ Հակոբի մեկ տաղը: Նաղաշ Հովնաթանի այս 5 տաղերից 4-ը վարիանտներ են, որոնց ավելի կատարյալ օրինակները տպագրված են վերը նշված ժողովածուի<sup>2</sup> մեջ, իսկ դրանցից մեկը անտիպ է:

Հրատարակվող այս անտիպ տաղը գտնվում է № 205 ձեռագրի 14ա — 14բ էջերում: Այս ձեռագրի հիշատակարանն է՝ «Ես Ջուղայեցի Նավասարդի որդի Մատուրըս գրեցի 11-ն 1759 յունիսի յԱմեդ քաղաքն կարին որ թարգմանի Ալղուլում»: Այսպիսով, ձեռագրի գրչության ժամանակը 18-րդ դարն է: Ավելացնենք, որ այս ձեռագրում կան բաղմաթիվ այլ տաղեր, աղոթքներ, տոնացույց և այլն:

Ուշադրով է այն, որ № 205 ձեռագրում գտնվում են Նաղաշ Հովնաթանի 3 տաղերը: Անտիպ տաղից մի քանի էջ առաջ (էջ 6) հանդիպում ենք Հովնաթանի մեկ ծանոթ «Նոր իմ սիրելի գարնան ծաղիկ» տաղին՝ տպագրված ժողովածուում (11-րդ տաղ), այնուհետև նույն ձեռագրի 13 էջում գրված է Հակոբ Նաղաշի «Առաւօտեց ելնեմ լալով քեզ մոտ կամ» տաղը<sup>3</sup>, (ժողովածուի հավելվածի 5-րդ տաղը): սրանից անմիջապես հետո 14ա — 14բ էջերում գրված է անտիպ «Նոր սիրելոյ համար ունիմ շատ հաւաս» տաղը, որը մենք վստահարար ենթադրում ենք, որ Նաղաշ Հովնաթանինն է: Այս անտիպ տաղից անմիջապես հետո ձեռագրի 13ա — 13բ էջերում գրված է Նաղաշ Հովնաթանի մեկ այլ, դարձյալ մեզ ծանոթ, և ժողովածուում տպագրված «Նոր տեսայ մեկ նոր սիրելի» տաղը (31-րդ տաղ):

205-րդ ձեռագրի գրչության թիվը ավելի վաղ շրջանի է, քան ժողովածուում տպագրված համապատասխան տաղերի ձեռագրերինը: Սրանցից՝ «Նոր տեսայ մեկ նոր սիրելի» տաղը գտնվում է Հայաստանի Մատենադարանի 7891, 4426, 5934 և Վիեննայի

<sup>1</sup> Նաղաշ Հովնաթանի, Բանաստեղծություններ, Հայկական ՍՍՌ Գիտ. ակադ. Հրատ., Երևան, 1952:

<sup>2</sup> Բոլոր դեպքերում «ժողովածու» գործածելիս նկատի ունենք Նաղաշ Հովնաթանի 1932 թվականին հրատարակված «Բանաստեղծությունների» վերոնշյալ ժողովածուն:

<sup>3</sup> Այս տաղը № 205 ձեռագրում կիսատ է. այստեղ պակասում է ժողովածուում տպագրված տաղի վերջին մեկ բառյակը, որտեղ հիշատակվում է Հակոբ անունը, քանի որ անուն չկա, հավանարար գրիչը այս տաղը Նաղաշ Հովնաթանինն է համարել, այն զետեղելով Նաղաշ Հովնաթանի տաղերի շարքում:

537 և 647 ձեռագրերում, նույն 4426 և 5954 ձեռագրերում է գտնվում նաև «Նոր իմ սիրելի դարնան ծաղիկ» տաղը: Վերև նշված Մատենադարանի 3 ձեռագրերից մեկի գրչության ժամանակը 19-րդ դարն է, իսկ երկուսինը 18-րդ դարը: Սրանցից 4426-ը գրված է 1765 թվականին այսինքն՝ ավելի ուշ, քան № 205 ձեռագրինը: Վիեննայի ձեռագրերի գրչության թվականը մեզ հայտնի չէ:

Իբրևում ենք անտիպ տաղի բնագործակույթյունը. «Վրաստանի թանգարան»-ի № 205 ձեռագրից:

Նոր սիրելոյ համար ունեմ շատ հաւաս,  
Այսօր տեսայ քեզի խիստ ևս նորահաս,  
Ջարդարվել ևս դառով խաս ու ստլասով,  
Ինձ թողել ես լայով ուրախ շուտ կուկաս,  
Քաղցրիկ եկ ինձ մօտ, եկ ինձ մօտ:  
Սօնամ եկ ինձ մօտ, եկ ինձ մօտ կարօտ եմ:  
    համար ունքեր աչկերտ անհուն ծով է  
    Սօնա էս քան դքեղ կեղեցիկ ով է,  
    Սիւտակ բուխախ, խաս դրմդ բարակ մով է,  
    Ընձնէ դատ ոչ ով քեզ կարող չէ կովէ:

Քաղցրիկ . . .

Փոքրու գոյն բերան շրթունքդ կարմրեղեն,  
Էլ չկայ քեզ նման պատկեր հողեղեն  
Պարակ մեջքդ ունիս դառ կերպասեղեն,  
Թող կիրկ ածեմ դուրս եկ քո տան ու տեղեն:

Քաղցրիկ . . .

Սպիտակ երեսդ է՛ր ես պատհում ծածկոցում,  
Ինձ թողել էս շիվար մտել ծաղկոցում,  
Ո՛ւմ համար ևս պահում շամամներ ծոցում,  
Համբուրելոյ համար սիրտս լի է խոցով:

Քաղցրիկ . . .

Սալվի սօյխտ մայիլ եմ չունիմ դարար,  
Քաղցր խօսկով իմ ուշն և խելքս տարար,  
Իս քեզ հետ նստելոյ սէր ունիմ վարար,  
Չկայ ինձ պես զերի Նաղաշ ծաղկարար:

Քաղցրիկ . . .

Ով ծանոթ է Նաղաշ Հովնաթանի ստեղծագործություններին, համոզվում է, որ այս տաղը, իսկապես, Հովնաթանին է պատկանում: Սակայն, անկախ Հովնաթանի տաղերին ծանոթ լինելու հանդամանքից կարելի է բերել մի քանի ասպոցույցներ, որոնք ավելի են հաստատում մեր ենթադրությունը: Առաջին և կարևոր ասպոցույցը զա հեղինակի անվան հիշատակությունն է՝ «Նաղաշ ծաղկարար», ինչպես նաև Հովնաթանի տաղերին բնորոշ «դերի Նաղաշ», «դերի Նաղաշ ծաղկարար» արտահայտությունը: Երկրորդ, և ոչ պակաս կարևոր ասպոցույցը անտիպ տաղի բովանդակության նմանությունն է Հովնաթանի տաղերից շատ տաղերի բովանդակությանը: Երրորդ ասպոցույցը այն է, որ այս տաղն էլ ունի դեղարվեստական այն առանձնահատկությունը, ինչ՝ ունեն Հովնաթանի մյուս տաղերը՝ լեզվի, պատկերների, համեմատությունների, չափի նմանություն ու նույնություն: Բացի վերոհիշյալ նմանություններից կան նաև բաղձաթիվ հանդերի նույնություն և ոճային նմանություններ: Իբրևնք դրանցից մի քանիսը:

1 № 205 ձեռագրում եղած բոլոր տաղերում գրիչը ձայնեղ բաղաձայնների փոխարեն գործ է ածում խուլ բաղաձայններ, օրինակ՝ բոյ-պոյ, դիրկ-կիրկ, կուկաս-կուկաս, դովէ-կովէ, բարակ-պարակ (էջ 14ա—14բ), դամ-կամ, բարով-պարով (էջ 13), դովելի-կովելի, բանովշա-պանովշա, բոյրդ-պոյրտ, զեամի-կեամի (էջ 14, 15): Տես Ժողովածուի 20, 71 և 221 էջերը:

Հանգերի նույնություն

Տպագրված տաղեր

Նորահաս, դառ ու գորաֆով  
կարմիր ատլասով  
դարար, տարար, վարար  
ծաղկարար  
հողեղեն

Անսխիւ տաղում

Նորահաս, խաս ու ատլասով  
դարար, տարար, վարար  
ծաղկարար  
հողեղեն

Ոճային նմանություններ

Տպագրված տաղեր

Ժողիդ շամամներն խիստ է նորահաս  
դու դարդարած կարմիր ատլասով  
չկա քեզ նման դեղեցիկ հողեղեն  
է՛ր ես կարմիր երեսդ ծածկում  
չարսաւդ վերադ հաւաքում  
պինդ կուպահես, աջար էդ ում  
համար այ  
քո ծոցն բախշա նուան, խնձորի  
պինդ կուպահես, աջար էդ ում  
համար այ  
դու իմ ուշ ու խելք ու միտքն ես  
տարել  
հարդիդ չունիմ սարբ ու դարար  
Նաղաշարարին խելքն տարար  
դու իմ խելքն տարար ես չունիմ  
դարար  
գերի Նաղաշ եմ

Անսխիւ տաղում

տեսա քեզի խիստ ես նորահաս  
արդարվել ես դառով խաս ու ատլասով  
էլ չկա քեզ նման պատկեր հողեղեն  
սիպտակ երեսդ է՛ր ես պահում ծած-  
կոցում  
ու՛մ համար ես պահում շամամներ  
ծոցում  
ինձ թողել ես շիվար մտել  
ծաղկոցում, ու՛մ համար ես պահում  
շամամներ ծոցում  
իմ ուշն ու խելքս տարար  
սալվի պոյիտ մայիլ եմ չունիմ դարար  
քաղցր խոսքով իմ ուշն ու խելքս  
տարար  
չկա ինձ պես դերի Նաղաշ

Այսպիսով, անտիպ տաղի վերջում բանաստեղծի անվան հիշատակութունը՝ «Նաղաշ ծաղկարար», «գերի Նաղաշ», ինչպես նաև այս տաղի՝ Հովնաթանի մյուս տաղերի շարքում դրված լինելու փաստը, բովանդակության նմանությունը, գեղարվեստական առանձնահատկությունները՝ լեզվի, շափի, հանդերի նույնությունն ու ոճային նմանությունները, դալիս են հաստատելու, որ «Նոր սիրելոյ համար ունիմ շատ հաւաս» անտիպ տաղը հաստատապես պատկանում է Նաղաշ Հովնաթանի գրչին: